29.09.23թ. **ք. Վանաձոր**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Լոռու մարզպետին կից՝ հասարակական կազմակերպություններից և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի նիստի

Մասնակցում էին՝

Հովհաննես Ավետիսյան(Լոռու մարզպետի տեղակալ, Աշխատանքային խմբի ղեկավար)

Հեղինե Հալիվորյան(Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի տեղակալ)

Աննա Գասպարյան(Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ)

Ալլա Նահապետյան(Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Աշխատանքային խմբի անդամ)

Արփինե Մատինյան(Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, Աշխատանքային խմբի անդամ)

Հասմիկ Մկրտչյան(Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ, Աշխատանքային խմբի անդամ)

Նաիրա Համբարձումյան(Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության գլախվոր մասնագետ)

Արուս Թումանյան(Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ, Աշխատանքային խմբի անդամ)

Վաղարշակ Եղիազարյան(Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ)

Արբակ Սարգսյան(«Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ, Աշխատանքային խմբի անդամ)

Սյուզան Հովսեփյան (ՀԿ կենտրոն, Աշխատանքային խմբի անդամ)

Լիպարիտ Դալլաքյան(ՈՄԱ ՎԱնաձոր, Աշխատանքային խմբի անդամ)

Էմիլիա Մարտիրոսյան(«Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» ՀԿ, Աշխատանքային խմբի անդամ)

Աշխեն Բաբայան(«Սպիտակի հելսինկյան խումբ», Աշխատանքային խմբի անդամ)

Հասմիկ Ջինանյան(«Օրրան» ՀԿ)

Անի Գաբրիելյան(«Լուսաստղ» ՀԿ, Աշխատանքային խմբի անդամ)

Գևորգ Մանուկյան(«ՀՍԻԿ» ՀԿ)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց Լոռու մարզում տարբեր հարցերով աջակցելու անհրաժեշտության և ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ մարզպետարանի և պետական պատկան կառույցների կողմից իրականացվող աշխատանքների մասին: Առաջարկությունների քննարկում:

(զեկ. Հովհաննես Ավետիսյան, Հեղինե Հալիվորյան)

2. Տեղեկատվական բազայի ստեղծման աշխատանքների ընթացքի վերաբերյալ: (զեկ. Սյուզան Հովսեփյան)

3. «Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու մոտեցման կիրառման ընթացակարգը»՝ Թումանյան համայնքում փորձի կիրառման վերաբերյալ: (զեկ. Սյուզան Հովսեփյան)

4. ՍՕԱՌ ԲՀ ֆինանսավորմամբ «Լուսաստղ» կազմակերպության կողմից իրականացվող՝ «Ադա» ցերեկային աջակցության կենտրոնի գործունեության մասին: (զեկ. «Լուսաստղ» ՀԿ նախագահ Անի Գաբրիելյան)

5. Մարզի համայնքներում քաղպաշտպանության կառույցների և բնակչության անվտանգությունը ապահովող միջոցների ուսումնասիրության և ինֆորմացիայի հասանելիության քննարկման կազմակերպման վերաբերյալ:

(զեկ. Լիպարիտ Դալլաքյան)

6. Մարզի համայնքներում իրականացված ծրագրերի վերաբերյալ:

(զեկ. աշխատանքային խմբի անդամներ(ըստ ցանկության))

7.Այլ հարցեր:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

1. Ներկայացվեց տեղեկատվություն ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց Լոռու մարզում տարբեր հարցերով աջակցելու անհրաժեշտության և ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ մարզպետարանի և պետական պատկան կառույցների կողմից իրականացվող աշխատանքների մասին: Կատարվեց առաջարկությունների քննարկում:

2. Սյուզան Հովսեփյանը (ՀԿ կենտրոն) ներկայացրեց մարզի ՀԿ-ների տեղեկատվական բազայի ստեղծման աշխատանքների ընթացքի մասին տեղեկատվություն:

3. Սյուզան Հովսեփյանը (ՀԿ կենտրոն) ներկայացրեց Թումանյան համայնքում «Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու մոտեցման կիրառման ընթացակարգը» և ծրագրի արդյունքները:

4. Անի Գաբրիելյանը («Լուսաստղ» ՀԿ նախագահ) ներկայացրեց ՍՕԱՌ ԲՀ ֆինանսավորմամբ կազմակերպության կողմից իրականացվող՝ «Ադա» ցերեկային աջակցության կենտրոնի գործունեության մասին տեղեկատվություն:

5. Լիպարիտ Դալլաքյանը (ՈՄԱ Վանաձոր) կարևորեց տեղեկատվության հասանելիությունը մարզի համայնքներում քաղպաշտպանության կառույցների և բնակչության անվտանգությունն ապահովող միջոցների ուսումնասիրության և ինֆորմացիայի հասանելիության քննարկման կազմակերպման վերաբերյալ:

6.Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ քննարկվեցին արդյունավետ և նպատակաուղղված համագործակցության հետ կապված այլ հարցեր:

ՈՐՈՇՎԵՑ

1. Ըստ անհրաժեշտության, ԼՂՀ-ից բռնի տեղահանված բնակչությանն աջակցելու հարցերում ակտիվորեն համագործակցել միմյանց հետ, ռեսուրսներն ուղղորդել՝ ըստ կարիքների առաջնահերթության:
2. Աշխատանքներ տանել ՀԿ-ների բազան վերջնական տեսքի բերելու և միմյանց փոխանցելու համար:
3. Թումանյան համայնքում իրականացված «Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու մոտեցման կիրառման ընթացակարգը» ծրագրի փորձն առաջիկայում ներկայացնել խոշոր համայնքների պատասխանատու պաշտոնյաներին:
4. ԼՂ-ից բռնի տեղահանված հաշմանդամ անձանց ուղղորդել «Ադա» ցերեկային աջակցության կենտրոն, ՍՕԱՌ ԲՀ-ի հետ քննարկել և հստակեցնել հետագա առաջարկվող օգնությունը:
5. Ապաստարանների կահավորման և կարգի բերման հարցում համագործակցել «ՈՄԱ Վանաձոր» ՀԿ-ի հետ:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ **Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ**